փութով դան Խաչին եւ Յիսնակաց. այլք Աւագ տօներն. իսկ կէսք Մեծ Բարեկենդանին. եւ այլք Մեծ Պահոց սկիզբն մինչ Զարգարդարի շաբաթն: Եւ Երուսաղէմ ամայի է առանց ըխտաւորաց. եւ Զատկին լի լինի արամբք: Եւ աղցացն ամէն կիրակի բացվի Յարութեան դուռն. եւ որչափ կամիս մուտ եւ ել:

Եւ մեքնեղանայաք եւ տարբմիլ լինէաք. զի է Երուսաղէմ որպէս վանք. ոչ է տեղ վաճառականաց, այլ սրբութեան եւ ուխտի: Եւ երբ լցվէին ուխտաւորքն, մեծ ուրախութիւն էր. զի ամենայն աշխարհէ գային: Եւ մեր տարին[1] կայր աւելի քան հազար մարդ: Իսկ հետ վերջի ուխտաւորացն եկն եւ Հոգեւոր Տէրն Յովհաննէս կաթողիկոսն Սրսոյ. որում տեսլեան բազում ամաց հետէ ցանկայի, զոր յԵրուսաղէմ հասի փափաղանաց. զոհութիւն ու փառք Աստուծոյ: Իսկ յորժամ աղցաց լինէր, սուրբ Յակոբայ դրան առջեւի մօյտանն որպէս պանայիր լինէր կամ պաղար. զի զամենայն ինչ զոր եւ կամէիր, գտանէիր. թէ՛ կերակուր մարդկան, թէ՛ դարման անասնոց, թէ՛ կտաւ, թէ՛ այլ ինչ:

ԱՑՑ Ի ՅՈՐԴԱՆԱՆ

Եւ աւագ երկուշաբթին մարդ կու գայ պարոնէն, թէ վա՛յ այն մարդուն ով չդնայ հետ պարոնին ի Յորդանան. զի երկու զու-

72 արութեան: — 77 լցվեր: — 81 յորում:

[1] Այն է՝ 1617: